ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր

0010, Երեւան-10, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 3

Հեռ/ֆաքս. (+374 10) 524-641
էլ.փոստ.agro@minagro.am

Ի պատասխան Ձեր _____ N _____ _____ N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղահրամանյան,

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի օգոստոսի 10-ի N 778/Ա-Ք և Հայաստանի պետական ագրարային համալսարանի ռեկտորի պաշտոնակատարի 2012 թվականի օգոստոսի 15-ի N 1985/Ծ-4 հրամանների՝ Արմավիրի մարզին հատկացվել է Հայաստանի պետական ագրարային համալսարանի հեռակա ուսուցման 2012 թվականի նպատակային ընդունելության 10 տեղ հետևյալ մասնագիտությունների գծով

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Տեղերը	Ուսման վարձը /հազ.դր /
310102	Ագրոնոմիա	1	160
310201	Անասնաբուծություն	1	160
310705	Խմորման արտադրությունների տեխնոլոգիա և գինեգործություն	1	190
310506	Ագրոէկոլոգիա	1	160
311103	Ագրոպարենային համակարգի հաշվապահական հաշվառում և աուդիտ	1	240
310112	Ապահովագրական գործ /ագրոպարենային համակարգի/	1	240
311003/ 190300	Փոխադրումների կազմակերպումն ու կառավարումն ագրոպարենային համակարգում, այդ թվում Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում	1	260
310104	Բույսերի պաշտպանություն	1	160
311107	Ագրոբիզնես և շուկայաբանություն	1	240
310707	Պահայածոյացման և սննդախտանյութերի տեխնոլոգիա	1	190
	Ընդամենը	10	

Նպատակային ընդունելությունը կազմակերպվում է մարզպետարանների ուղեգրերի հիման վրա՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության գործուղմամբ:

Նշված մասնագիտություններով նպատակային ընդունելությունը կազմակերպելու համար խնդրում եմ մինչև 2012 թվականի սեպտեմբերի 17-ը ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել համապատասխան ուղեգրերը:

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են 2012 թվականի օգոստոսի 10-ից մինչև սեպտեմբերի 20-ը: Փաստաթղթերի ընդունման ժամկետը կարող է երկարաձգվել ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով: Քննություններն անցկացվելու են 2012 թվականի սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 20-ը:

Հարգանքով՝ ՍԵՐԳՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ագրովերամշակման զարգացման վարչության
գիտական և գյուղատնտեսության աջակցության
կենտրոնների համակարգման բաժնի պետ Հ.Գաբրիելյան
հեռ.297428